Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

08.07.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 07.07.2015թ.-ի թիվ 88 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնում անցկացվեց 2015թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի և գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց բաժնի պետ՝ Ս.Մարգարյանը:

Նախնական տվյալներ.

Բաժինը ղեկավարում է բաժնի պետը: Բաժինն ունի կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Բաժնի պետը քաղաքացիական ծառայող է:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում՝ բաժնի գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

ա/ Բաժնի կանոնադրության, բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված քաղաքացիական ծառայողի իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Տեղեկատվության ազատության մասին>>, <<Հանգվածային լրատվության մասին>>, <<Լեզվի մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը և ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Համադրել ենք <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Տեղեկատվության ազատության մասին>>, <<Հանգվածային լրատվության մասին>>, <<Լեզվի մասին>>, <<Հեռուստատեսության և ռադիոյի մասին>> ՀՀ օրենքներով և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունության համակարգման, մարզպետին վերապահված լիազորությունները բաժնի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ բաժնի կանոնադրությամբ և բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված քաղաքացիական ծառայողի իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են << նախագահի հրամանագրով, ոլորտը կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Հ. Ավետիսյան

Ն.Կարապետյան

Տեղ. և հաս. հետ կապերի բաժնի պետ՝ Ս. Մարգարյան